



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, vanadzorcify@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 մարտի 2014 թվականի N 15-Ա

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ՎԱՇԵ ԴՈՒՈՑԱՆԻՆ ԼԻԱԶՈՐԵԼՈՒ ՄԱՄԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 104.1-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասը, 42-րդ հոդվածը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածը՝ Վանաձոր համայնքի ավագանին

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Լիազորել Վանաձոր համայնքի ավագանու անդամ Վահե Դոխոյանին՝ ներկայացնելու Վանաձոր համայնքի ավագանու շահերը ՀՀ բոլոր դատարաններում և դատական ատյաններում՝ թիվ ԼԴ/0565/02/09 քաղաքացիական և թիվ ՎԴ 6/0032/05/14 վարչական գործերով, ինչպես նաև 26.02.2007թ. թվականին Վանաձոր համայնքի՝ ի դեմս Վանաձորի քաղաքապետի և Համլետ Ալբերտի Չատիսյանի, Նահրա Նասիրի Զաքարյանի, Ալբերտ Մաղաթի Չատիսյանի, Ռոզիկ Պողոսի Կոստանդյանի, Մեեր Համլետի Չատիսյանի, Դավիթ Համլետի Չատիսյանի միջև կնքված պայմանագրի շուրջ ծագած վեճերից բխող կամ դրան առնչվող բոլոր գործերով, ինչպես նաև ներկայացնելու Վանաձոր համայնքի ավագանու շահերը երրորդ անձանց հետ հարաբերություններում:

2. Ավագանու անդամ Վահե Դոխոյանը լիազորվում է՝
  - Ստորագրել հայցադիմումներ.
  - Գործը հանձնել արբիտրաժային տրիբունալին.
  - Ամբողջովին կամ մասնակի հրաժարվելու հայցային պահանջներից և ընդունելու հայցը.
  - Փոխելու հայցի առարկան կամ դրա հիմքը.
  - Փոխելու հայցային պահանջների չափը.
  - Կերելու հաշտության համաձայնություն.
  - Այլ անձի փոխանցելու լիազորությունները /վերալիազորում/.
  - Բողոքարկելու դատական ակտերը.
  - Ստանալ կատարողական թերթ և ներկայացնել հարկադիր կատարման ԴԱՀԿ ապահովող ծառայություն.
  - Բողոքարկել ԴԱՀԿ ԱԾ որոշումները, գործողությունները և անգործությունը:
3. Լիազորագիրը տրվում է վերալիազորման իրավունքով՝ 2 տարի ժամկետով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ԿՈՂՄ(11)

ԴԵՄ(0)

ՁԵՆՆՊԱՀ(1)

Գ.Քալանթարյան

Ա.Հարությունյան

Ա.Այվազյան

Ս.Աղաբեկյան

Յ.Փելեշյան

Ա.Ափինյան

Ա.Մատինյան

Ա.Գրիգորյան

Վ.Դոխոյան

Կ.Պառավյան

Վ.Դավիթավյան

Դ.Սիմոնյան



ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝

ՍԱՄՎԵԼ ԴԱՐԲԻՆՅԱՆ